



Դու ես կերտում քո ժամանակը:
Համոզված եղիր՝ տարիներ հետո
Քո կերտած ժամանակը լավն է լինելու...

Քո ժամանակը

№ 09
ՀՈԿՏԵՄԲԵՐ
2018

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՈՆՆԵՐԻ ՊԵՍ ՀԱՅՐԵՆԻՔՆԵՐՆ ԷԼ ՊԱՅԱՆՋՈՒՄ ԵՆ, ՈՐ ԻՐԵՆՑ
ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԵՐԸ ԼԻՆԵՆ ՏԱՔ ԵՎ ՄԱՔՐԱՄԱՔՈՒՐ:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ե Վ Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ Ի Դ Ա Ս

Հայրենասիրությունն է մարդկային առաքինությունների թագն ու պսակը: Հայրենիքի պաշտպանությունը, նրա ազատության ու անկախության համար պայքարելը ամենավեհ գործն է: Հենց այս գաղափարով են առաջնորդվել մեր հայրենապաշտ հերոսները, ովքեր, մի կողմ դնելով անձնականը, առանց մեկ վայրկյան անգամ կասկածելու, նետվում էին մարտի՝ հանուն հող հայրենիի պաշտպանության: Հայրենիքի պաշտպանության սուրբ գործը կանչում էր հայրենամյներ հայորդիներին: Նրանք կռվեցին, շատերը՝ ընկան...

Քայլում ենք Մայր բուհի՝ ԱրՊՀ կանաչապատ պուրակով, և քայլերը մեզ տանում են սրբասուրբ մի վայր, որն ամսահներին է՝ հավերժական ներկաներին, մեր աղոթատեղին, մեզ դեպի շարունակական արիության դասի մղողներին:

Բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանի ջանքերով կազմակերպվեց հիշատակի և խոնարհման միջոցառում՝ ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու, գրականություն և լրագրություն մասնագիտությամբ սովորող ուսանողներին մասնակցությամբ՝ «Արիության դաս» անվանումով: Արցախյան պայքարի նահատակ հայորդիների և ԱրՊՀ զոհված ուսանողների հիշատակին խոնարհեցինք թարմ ծաղիկներ և մոմավառությամբ հարգեցինք նրանց հիշատակը: Ուսանողների շուրթերից հնչեցին ինչպես խոնարհման և սփոփանքի խոսքեր, այնպես էլ՝ իմաստասիրական ասացումներ՝ Մեծն Նժդեհի պատգամներով, ապա մա՛ն՝ հայրենասիրական կատարումներ՝ պարուրված լուսավոր ապագայի հույսերով:

Յուրաքանչյուրիս անբեկանելի պարտքն է ամեն խաղաղ բացվող առավոտ հիշել նրանց և աղոթել Աստծուն, որ այլևս փոթորիկ ու ամպրոպ չլինի հայրենի երկնականարում, ցայգ ու



այգերը լինեն խաղաղաբեր, որ նորից չցնցվի հայի այս մի բուռ հողը, որը մեր բյուրավոր նահատակների արյունով է մասունքված ու սրբացված: Նրանք՝ բոլոր ժամանակների հայրենիքի նահատակները, մեր չխամրող հիշողությունն են ու անանց հպարտությունը, ներկայությունը բոլոր ժամանակների: Երգվում ենք, սիրելիներս, հավատարիմ մնալ ձեր թողած պատգամներին ու անմիջապես պահել Հող հայրենին:

Լուսինե Օհանջանյան

Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս

ԻՄ ՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Մենք իրար ճանաչում ենք կիսով չափ: Այն կեսով, որով նստած ենք իրար կողքի՝ կյանքի վանդակում: Ես եմ, նա ու մեզ չներակրելու տգեղ ցուցանակը: Կյանքը պահում է մեզ այն պարտադիր պայմանով, որ դրսից նայողին զվարճացնեն ապրելու իմ փորձերը: Ծիծաղ է լսվում միայն վանդակի ներսում:

Նա ինձ չի նայում, իսկ ես զգում եմ՝ մի քիչ էլ չնայի՝ կսիրահարվեմ: Այսպես կսկսվի միամիտն ու ճակատագրականը. իր սիրած գույնով կներկեն մեր վանդակի ծողերը, կասեղնագործեն շապիկս՝ լոգանենյալից երգվող բառերով: Ու կդառնամ գերու գերին: Սեփական ընտրության վանդակում լավ է: Հարմար է բանտարկել քո միայն մեկ ես-ին, իսկ հետո կենտրոնացնալ նրա հերոսական

փրկության վրա: Անտեսել այն հինգ «մարդկանց», որ դու ես, քոնն ես և ապրում եմ այնքան ազատ, որքան սահմանափակում է քո անտարբերությունը: Համառ կամակորությամբ կորցնում ես ինքդ քեզ, դառնում ամբողջովին ինքը: Սովորում ես հետևել վանդակից դուրս քեզ նայողին, կասկածում, կարծում և անընդհատ պատմում տեսածդ ծողերի արանքում կուտակված փոշուն: Փաթեթավորում, փաթեթում ուրիշի ականջներին: Վանդակից հանում ես ձեռքդ դուրս, փորփրում աղբամանը, պատահական նետված ճիշտը գտնում հոտող ստերում, հանդուժում քո լինելու կարևորության մեջ: Վանդակում եմ կամ յուրահատուկին կամ հատուկ վտանգավորին. պատահաբար թակարդվելով՝ ստիպված ես ձևանալ այդպիսին:

Վանդակում լավ է. երեխաները երբեմն գալիս են քեզ նայելու: Կամ թաքուն կերակրելու քո վանդակացին: Չնայած ձեզնից ամենասովա՞ծ միշտ դու ես լինում: Նա կիսվում է քեզ հետ, բացում բերանը՝ մի պատառ կարծիք ծանելու, ու էլ չի լռում: Պարզ բառերի տեղատարափ հոսքով բեկում է ձեր վանդակի լարված օդը: Այդ բառերով ձնեմարդ սարքում քո գլխին: Իսկ դու պատրաստ ես աչքերդ հանել տալ ձնե կույտին. առանց աչքերի մտածելը հեշտ է:

Եթե շատ մտածես՝ կհիշես, որ չես հաշվել ձեր համատեղ անազատության բանակը: Քանի օր է քո հարևանը փակված խցում, հնարավոր է՝ երկու կամ երեք շաբաթ: Հնարավոր է՝ նա չի լողացել ուղիղ վանդակային մի կյանքը, հնարավոր է՝ մինչև այս-

տեղ հայտնվելն էլ չի լողացել: Սիրես նրան՝ կկեղտոտես ձեռքերդ:

Ես հենված եմ նրա ձախ ուսին: Այս տեսանկյունից նա գեղեցիկ է: Գեղեցիկ, բայց՝ կեղտոտ: Կեղտոտ, բայց և՛ գեղեցիկ: Մի խոսքով՝ բարդ:

Նա թեթում է հայացքը վանդակից դուրս՝ նայելու քեզ նման տաղանդաշատ կամավորներին, որ սպասում են վանդակ մտնելու իրենց հերթին: Իսկ դու. «... չէ, չէ, չէ, միայն փորձիր»:

Դու բարձր փռշտում ես՝ հիվանդոտ կեղծավորությամբ ուշադրությունը կենտրոնացնում քո հոգնած դեմքին, փորձում պահել այն հնարավորինս երկար: Լրագրությունը նման է այն մարդուն, ում շատ են հավանում, բայց շատ հավանելուց էլ՝ դժվարանում հարմարվել կամ հարմարեցնել: Պահի տակ նյարդայնացնում է քեզ, քոս առաջացնում ուղեղիդ ծալքերի արանքում: Որովհետև վանդակվածին հասկանալը բարդ է, առավել բարդ, երբ պարզվում է՝ վանդակը հենց իրենն է: Թքած, նա այլընտրանք չունի, որովհետև, քիչ . ահա դուք, ահա քո ընտրությունը, ձեր այլանդակ ցուցանակը, շատախոս ինքը և անհանգիստ դու: Դու, որ փորձում ես փոքր քառակուսու մեջ գտնել խոհանոց, բաղնիք, մեջարան՝ քո բարդ հարևանի կարիքները հոգալու, նկատվելու, ընդունվելու համար: Հետո թաքուն փնտրում ես վանդակի բանալին՝ արդեն քեզ համար. մարդ ես, պետք կգա: Լրագրության հետ մի վանդակում դու սիրահարված ես ու՝ հոգնած:

Շողեր ՍԱՐԳՍՅԱՆ

Լրագրություն 2-րդ կուրս

ՆԱ ՀԱՄԱՐՁԱԿ, ԲԱՐԻ, ԵՐԱԶԿՈՏ, ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ, ԿՅԱՆՔԻՆ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԱՐԴՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻ ԳԱԼՅԱ ԱՌԱՍԱՄՅԱՆՆ Է



Գալյայի հետ զրուցել է լրագրություն 1-ին կուրսի ուսանողուհի Դիանա Մխիթարյանը: Համալսարանական կյանքի, երազանքների, նախասիրությունների մասին է զրույցը:
-Գալյա, սովորում ես ԱրԴՅ պատմաիրավագիտական ֆակուլտետի կերպարվեստ բաժնի 2-րդ կուրսում: Ի՞նչ տպավորություններ ունես համալսարանից: Ինչպե՞ս եմ անցնում ձեր ուսանողական օրերը:
 -Ուսանողական կյանքը շատ հետաքրքիր է, բայց միաժամանակ դժվար: Իմ կարծիքով, ուսանողական կյանքը յուրաքանչյուրի համար էլ

հիշարժան է, քանի որ այն մեր երիտասարդությունն է: Համալսարանում շատ ջերմ մթնոլորտ է տիրում, ես ինձ լավ եմ զգում այստեղ. կա հնարավորություն՝ հաճելի ու արդյունավետորեն համատեղելու: Մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելուն զուգահեռ ուսանողական հետաքրքիր օրեր ենք վայելում հագեցած տարաբնույթ միջոցառումներով:
-Ի՞նչ երազանքներ, նպատակներ և նախասիրություններ ունես:
 -Շատ երազանքներ եւ նպատակներ ունեմ, բայց դրանցից կնշեմ միայն մի քանիսը: Երազում եմ դառնալ հայտնի նկարչուհի: Իմ նկարներում ես կպատկերեմ Արցախ աշխարհի բնությունը եւ գեղատեսիլ վայրերը: Նաեւ երազում եմ ծամփորդել: Ես կարծրատիպերով չեմ ապրում և սխալ եմ համարում ապրել դրանցով, այն էլ՝ 21-րդ դարում: Սիրում եմ լսել ժամանակակից ռոք, փոփ երաժշտություն: Հաճախում եմ նաև ԹՈՒԲՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն: Թումոյում ևս առօրյան շատ հետաքրքիր է անցնում: Ես այնտեղ նոր գիտելիքներ ձեռք բերեցի, ինչպես նաև նոր շրջապատ, նոր ընկերներ: Մարզիչները շատ լավն են եւ բարեհամբույր: Միշտ մեզ օգնում են, երբ խնդիրներ են առաջանում համակարգչային ծրագրերի հետ կապված:

Խորհուրդ կտամ, որ պատանիները չերկմտեն, նրանք ևս հաճախեն Թումո:
-Ստեփանակերտը հարազատ քաղաք է բոլորիս համար: Բայց, խոստովանենք, որ մեզնից յուրաքանչյուրն իր փոքրիկ բաժինն ունի մեր քաղաքը ավելի լավը դարձնելու գործում: Ինչպիսի՞ փոփոխություններ կցանկանայիք, որ լինեն մեր քաղաքում:
 -Մեր քաղաքը, իսկապես, շատ գեղեցիկ է իր բարձրահարկ շենքերով, քանդակներով, գիշերային լուսավորությամբ, շատրվաններով, գեղատեսիլ վայրերով: Իմ կարծիքով, առաջնային պետք է համարել մաքրության պահպանումը, որպեսզի այն ավելի գրավիչ լինի: Ինչպես նաև ցանկանում եմ, որ հաճախակի կազմակերպվեն այնպիսի միջոցառումներ, որոնք կհետաքրքրեն երիտասարդներին եւ պատանիներին: Ամենակարևոր երազանքը, որ փայփայում է յուրաքանչյուր հայ, խաղաղությունն է, որ հարատև լինի մեր երկրում: Մնացած խնդիրները քայլ առ քայլ կլուծվեն, եթե մեզնից յուրաքանչյուրն իր աշխատանքը լավ կատարի: Այս պահին մեր ամենակարևոր անելիքը լավ սովորելն ու լավ մասնագետ դառնալն է, ինչին էլ ես ուղղում եմ բոլոր ջանքերս:

Հարցազրույցը՝ Դիանա Մխիթարյանի, լրագրություն 1-ին կուրս:

ՀԱՆՏԱՐՆԵՐԻ ՄԱՅՈՎ ՍԿՍՎՈՒՄ Է ՆՐԱՆՑ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Նրանք սովորական մահկանացուներին սման չեն, որ վախենան մահից: Շատ լավ գիտակցում են իրենց կոչումը. այրվում են մարդկության համար ու սպառնում մոմի պես: «Դուք կնվաճեք աշխարհը, որովհետև կարող եք հուզել», - Շառլ դը Գոլը այս խորիմաստ արտահայտությամբ էր կանխատեսել ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, երգահան, բանաստեղծ Շառլ Ազնավուրի ապագան: Հանճար, որն իր առաքինությամբ ու անձնագրի մարդասիրությամբ հավերժ կտիեզերանավի իր անմահության ծիրում:
 Մեծ հայի աստվածային ներշնչանքով ծնված տողերում զգացմունքների եռքն իր հետ բերում է բառաստեղծման ու պատկերաստեղծման հրաբխային լավա, գեղարվեստական անգուգական պատկերներ: Նրա ամեն մի ստեղծագործությունը գրական կերտվածք է, որ թե հույզերի հզորությամբ, թե մեղեդայնությամբ, թե արվեստով հավասարը չունի, և որոնք ծնվել են հզոր ու անկեղծ ապրումներից, վերածվել պաշտամունքային կոթողների, հաստատվել աստվածային դրոշմով: Ազնավուրին ճանաչել և շոնդալից ծափահարություններով ընդունել է ոչ միայն Փարիզը, այլև ամբողջ աշխարհը: Սակայն փառքը երբեք չի շփացրել մեծ երգչին. նա շարունակել է մնալ իր արվեստի անխոնջ մշակը և հենց դրա շնորհիվ էլ սրտեր է գերել, հիացրել մարդկանց: Նրա լսարանում ամեն կրոնի, ամեն լեզվի տեր մարդիկ են եղել, և նա միշտ բաց է եղել իր երգը սիրող յուրաքանչյուրի առջև:
 «Ի վերջո դժվար կյանքս ու խաբված սերերս են, որ ինձ դարձրին այն, ինչ կամ ու համարձակվում եմ ասել, թող ինքնագովութուն չթվա, ես ինձ դուր եմ գալիս», - մի առիթով ասել էր Ազնավուրը՝ սիրո մեծագույն երգիչներից մեկը:
 Նա միշտ հանդգնում էր սերը, կնոջը գովերգել այնպես, ինչպես ոչ ոք:

«Կանայք, որոնց միշտ ամեն ինչից վեր եմ դասել, սիրել եմ ինձ, խաբել, լքել, պաշտել, բայց հեռանալուց առաջ երջանկության պատրանքներ են տվել ինձ: Ես էլ իմ հերթին խաբել եմ՝ նախքան կխաբեին ինձ, այսպիսով խաբել եմ ինքս ինձ: Ի՞նչ արած, այդ է կյանքը, այդ է սերը»:
 Նրա բանաստեղծություններում սիրուց ծնվում են բարեգթությունը, կարեկցանքը: Անգամ դժբախտ սերը դառնում է մտքի թռիչքի, հոգու սլացքի ակունքը: Սիրահարը չնչին հրճվանքից թև է առնում, նույնքան չնչին առիթից՝ վշտի անձկության մեջ թաղվում:
 Վազելով վաղանցիկ սերերի հետևից՝ բանաստեղծը մեծ ակնածանքով է բնութագրել կանանց: Նրա տողերում կնոջ նազանքը պշրանք է, և պերճանքն աստվածատուր է:
 Հայ բանաստեղծի ստեղծագործություններում մեծ տեղ է զբաղեցնում մայրական բնարը:
 «Մայրերը ամեն ինչ գեղեցկացնելու առանձնահատուկ ծիրք ունեն: Շնորհիվ նրանց, և հաճախ միայն նրանց համար, ծնված օրվանից մենք դառնում ենք առասպելական անձնավորություններ»:
 Մեծ հային ծնած կինը՝ Քնար Ազնավուրյանը, եղեռնի տարիներին 15 տարեկան հասակում կորցրել էր ծնողներին, քրոջը, եղբայրներին, բայց սարսափներ տեսած կինը միշտ մնացել էր բարի, իմաստուն, զուրկ վրեժխնդրության զգացմունքից:
 Ազնավուրն ասում էր. «Մայրս համեստ էր, բայց կարեկցող և ամենահաս»:
 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո ամբողջ աշխարհից օգնության բեռներ հոսեցին դեպի Հայաստան: Անթիվ-անհամար բարեգործների մեջ էր Ազնավուրը, որն առանձնապես էր թե՛ իր մոտեցմամբ, թե՛ անձնագրի մարդասիրությամբ, թե՛ բարեգործության մասշտաբներով: Նա ոչ միայն



անձամբ այցելել էր աղետյալներին, այլև կազմակերպել էր ֆրանսահայության օգնությունը, ստեղծել «Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամը՝ առատաձեռնությամբ վարակելով շատերին:
 Իր ազնվական բարեգործությամբ նա սթափեցրել էր այն սփյուռքահայ մեծահարուստներին, ովքեր «ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզի» մնան էին ապրում:
 «Իմ ճանապարհը հեշտ ու հանգիստ չի եղել: Շատ դառնություններ են ծաշակել այդ ճանապարհին՝ երեսիս փակված դռներ, հեզմանքով լի ժպիտներ, չարախոսություններ...», - ասել էր Ազնավուրն իր մասին:
 Կենդանի լեզունդն այլևս հավերժ ծամփորդ է, սակայն նրա թողած գրական ժառանգությունը մարդկության կողմից երբևէ ստեղծված ամենակատարյալ արարչագործություններից է՝ առիքնող, անմահ ...
 Նրա հայ լինելը հազեցնում է իմ ազգային արժանապատվության ծաղկավր... Երանի՜ նրանց, ովքեր ճանաչել են հանճարին:
Մերի Հարությունյան, լրագրություն 3-րդ կուրս